ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 10 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

# ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՔՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻՆ

*Սեպտեմբերի 18-ին տեղի ունեցավ Համ. Կ(բ)Պ Կենտկոմին կից Մարքս-Էնգելս-Լենինի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի միացյալ գիտական սեսիան՝ նվիրված Բաքվի 26 կոմիսարների չարանենգ սպանության 30-ամյակին։*

*«Սովետական իշխանությունը Բաքվում 1918 թվին» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ավետիսյանը։*

*— Սովետական իշխանության հաստատման համար մղված պայքարի պատմության հերոսական ու վառ էջերից մեկն է Բաքվի կոմունան,— ասում է իր զեկուցման մեջ ընկ. Վ. Ավետիսյանը.— Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները և մասնավորապես Բաքվի պրոլետարիատը միշտ էլ նշանավոր դեր են խաղացել։ Դեռևս 1905 թվականին ընկեր Ստալինը նշել է, որ Բաքուն հանդիսանում է Ռուսաստանի ռևոլյուցիոն կենտրոններից մեկը և Անդրկովկասի ամենառևոլյուցիոն կենտրոնը։*

*Այստեղ, Անդրկովկասում դասակարգային մեծագույն գոտեմարտերում ստեղծվել ու կոփվել է բոլշևիկյան պարտիայի առաջավոր ջոկատներից մեկը, որին գլխավորել ու աճեցրել է բոլշևիկյան պարտիայի մեծ հիմնադիր Վ. Ի. Լենինի մերձավորագույն զինակից ընկեր Ստալինը։*

*Ընկեր Ստալինի և նրա շուրջը համախմբված պրոլետարական ռևոլյուցիոներների փայլուն պլեադայի՝ Օրջոնիկիձեի, Շահումյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի, Սպանդարյանի, Ֆիոլետովի բազմամյա աշխատանքը Բաքվի պրոլետարիատի շարքերում աճեցրեց այնպիսի մի սերունդ, որը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի մարտական դրոշակակիրը դարձավ Անդրկովկասում։*

*Հենվելով Ռուսաստանի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի հաղթանակի վրա, Բաքվի պրոլետարիատը առաջինն էր Անդրկովկասում, որ բոլշևիկների ղեկավարությամբ Բաքվում հռչակեց Սովետական իշխանություն և կանգնեց ամբողջ Կովկասում սովետների համար պայքարող բանվորա-գյուղացիական ուժերի գլուխը։ Բաքվի պանծալի կոմունայի ամբողջ հետագա աշխատանքի ու պայքարի բովանդակությունը կազմում էր պետական իշխանության հաղթանակը Ադրբեջանում և ամբողջ Անդրկովկասում։*

*Բուրժուա-կալվածատիրական կոնտրռևոլյուցիան, հանձին իր մենշևիկյան, էսեռական, դաշնակցական ու մուսավաթական պարտիաների՝ կատաղի դիմադրություն էր ցույց տալիս Բաքվի սովետի ներսում բոլշևիկների բոլոր ձեռնարկումներին, թույլ չտալով որ ամրապնդվի Սովետական իշխանությունը։ Կոնտրռևոլյուցիոն պարտիաները, նաև սովետից դուրս ստեղծեցին իրենց դիմադրության օրգանները (մուսուլմանական ու հայկական ազգային խորհուրդներ, քաղաքային դումա, մենշևիկների ու էսեռների հասարակական անվտանգության կոմիտե), որոնց օգնությամբ նախապատրաստվում էին տապալելու նորաստեղծ Սովետական իշխանությունը Բաքվում։*

*«Բաքվի կոմունայի պայքարը գերմանո-թուրքական և անգլիական ինտերվենցիայի դեմ» թեմայով զեկուցեց պրոֆ. Մ. Ներսիսյանը։*

*Բաքվի կոմունան իր դեմ ուներ բազմաթիվ թշնամիներ։ Կոմունայի դեմ դուրս եկան Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը — մուսավաթականները, վրաց մենշևիկները, դաշնակցականները, էսեռները։ Բաքվի Սովետական իշխանության դեմ իրենց ուժերը կենտրոնացրին գերմանա-թուրքական և անգլիական իմպերիալիստները։ Սովետական Բաքուն գտնվում էր կրակի օղակի մեջ։ Կոմունայի զինված ուժերը շարունակ պայքարի մեջ էին իրենց կատաղի թշնամիների դեմ։ Ապրիլի սկզբներին, երբ նոր էր կազմակերպվել կոմունան, սկսվեց կոնտրռևոլյուցիոն ուժերի հարձակումը Բաքվի վրա։ Հյուսիսից հարձակվում էր Դաղստանի կոնտրռևոլյուցիոն բանդան՝ իմամ Գոցինսկու գլխավորությամբ, իսկ հարավ-արևելքից երկաթուղու վրայով Բաքվի վրա արշավում էին Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ կնյազ Մաղալովի գլխավորությամբ։ Այս բանդային հաջողվեց գրավել Հաջիկաբուլը։ Միաժամանակ Ադրբեջանի տարբեր շրջաններում և մասնավորապես*

Լենքորանում ու Շամախում, մուսավաթականների գլխավորությամբ խանա-բեգական հրոսակախմբերի հետ միասին կազմակերպվում էին նորանոր բանդաներ Բաքվի վրա հարձակվելու համար։ Բաքվի Սովետական իշխանության համար ստեղծվում էր վերին աստիճանի ծանր դրություն։ Տեղում ստեղծված Պաշտպանության Ռևոլյուցիոն Կոմիտեն զենքի կոչեց Բաքվի պրոլետարիատին։ Այդ կոչը բուռն արձագանք գտավ Բաքվի աշխատավորության լայն շրջաններում։ Կազմակերպվեցին նորանոր զինված ջոկատներ, որոնք և անցան հակահարձակման։ Թշնամու հորդաները ջախջախվեցին։

Այս փայլուն հաղթանակից հետո Բաքվի կոմունայի զորամասերը մաքրեցին Ադրբեջանի շրջանները կոնտրռևոլյուցիոն բանդաներից, մինչև Դաղստանի սահմանները։

Շարունակելով հարձակողական մարտերը, կարմիր զորամասերը ապրիլ և մայիս ամիսներին գրավեցին Պետրովսկը, Շամախին, Ղուբան, Լենքորանը, իսկ հունիսի 19-ին՝ Քյուրդամիրը։ Բաքվի կոմունան ամրապնդվեց և ուժեղացավ։ Կենսագործվեցին մի շարք միջոցառումներ Սովետական իշխանության դիրքերն ամրացնելու, աշխատավորների դրությունը բարելավելու և Սովետական իշխանությունը գավառներում ծավալելու ուղղությամբ։

Պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդներ Լենինը և Ստալինը մշտապես հետևում էին կոմունայի գործունեությանը և ղեկավարում նրա աշխատանքները։

Հուլիս ամսից Սովետական Բաքվի համար նորից ստեղծվում է ծանր վիճակ։ Կոմունայի դեմ հանդես են գալիս նրա արտաքին և ներքին բոլոր թշնամիները։ Բաքվի վրա արևմուտքից հարձակվում էին գերմանա-թուրքական ուժերը, արևելքից անգլիական իմպերիալիստները, իսկ հյուսիսից և հարավից սպիտակ գվարդիական և մուսավաթական բանդիտական ուժերը։ Հյուսիսային Կովկասում գործող սպիտակ գվարդիական ուժերը կտրել էին Բաքվի և Սովետական Ռուսաստանի միջև եղած ցամաքային կապը։

Կոմունայի ներսից գործում էին էսեռները, դաշնակները, մենշևիկները, որոնք գաղտնի կապերի մեջ էին Իրանում գործող անգլիական ուժերի հետ և բոլոր միջոցներով աշխատում էին Բաքուն հանձնել նրանց։

Կոնտրռևոլյուցիոն ուժերին հաջողվում է Բաքվի Սովետի 1918 թ. հուլիսի 25-ի նիստում ձայների չնչին մեծամասնությամբ որոշում ընդունել անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին։ Բաքվում Սովետական իշխանությունը ժամանակավոր պարտություն է կրում։ Բաքու են խուժում անգլիացիները, որոնք սկսում են կողոպտել Ադրբեջանը, խեղդել ռևոլյուցիոն շարժումը և հոշոտել նրա ականավոր ղեկավարներին ու առաջնորդներին։ Անգլիական իմպերիալիստներն իրենց այդ կամակատարների հետ միասին կազմակերպում են Բաքվի 26 կոմիսարների գազանային սպանությունը, ցանկանում են խեղդել ռևոլյուցիոն շարժումը, բայց նրանց հաշիվները սխալ դուրս եկան։

«Բաքվի կոմունայի սոցիալիստական միջոցառումները» թեմայի մասին զեկուցեց ընկ. Ծ. Աղայանը։

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 12-ին Ալ. Սպենդիարովի անվան Պետական Օպերայի և Բալետի ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ ՀԿ(բ)Պ Երևանի կազմակերպության քաղաքային կոմիտեի և աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետի կողմից կազմակերպված հանդիսավոր նիստը, նվիրված Ստ. Շահումյանի ծննդյան 70-ամյակին։

Հանդիսավոր նիստում բացման խոսք ասաց ՀԿ(բ)Պ Երևանի քաղկոմի քարտուղար ընկ. Հ. Դավթյանը։

Բոցաշունչ բոլշևիկի, Լենին-Ստալինի հավատարիմ աշակերտ ու զինակից Ստ. Շահումյանի կյանքի ու ռևոլյուցիոն գործունեության մասին զեկուցեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից Մարքս-Էնգելս-Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր Վ. Ավետիսյանը։

Զեկուցողը բնութագրելով Շահումյանի ռևոլյուցիոն գործունեությունը, ասաց.

— Լենին-Ստալինի պարտիայի ականավոր գործիչ, անձնվեր ռևոլյուցիոներ, հայ ժողովրդի լավագույն զավակ Ստ. Շահումյանի սքանչելի կյանքը Լենինի—Ստալինի մեծ գործին, կոմունիզմի գործին անսահման նվիրվածության լավագույն օրինակ է հանդիսանում։ Դեռ պատանի հասակից, մարքսիստական-լենինյան պարտիայի ստեղծման արշալույսին, Ստ. Շահումյանը իր կյանքը կապեց բոլշևիկների պարտիայի հետ, Ռուսաստանում պրոլետարիատի սոցիալիստական շարժման հետ։ Աշխատելով Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ, Շահումյանը դարձավ պրո-